

ՍԵՐԳԵՅ ՍԱՐԻՆՅԱՆ. Հայոց գրականության երկու դարը, Հ. I, Երևան, «Սովետական գրող» հրատ., 1988, 535 էջ, Հ. II, Երևան, «Սովետական գրող» հրատ., 1989, 567 էջ, Հ. III, Երևան, «Զանգակ-97» հրատ., 2003, 651 էջ, Հ. IV, Երևան, «Տիգրան Մեծ» հրատ., 2004, 635 էջ:

Սերգեյ Սարինյանի գրականագիտական ժառանգության մեջ, ի թիվս բազմաթիվ ծավալուն մենագրությունների, վերջին 17 տարում լույս են տեսել 4 ստվար հատորներ՝ «Հայոց գրականության երկու դարը» ընդհանուր խորագրով: Առաջին հատորը լույս է տեսել 1988-ին, չորրորդը՝ 2004-ին:

Հենց առաջին հատորի մեջ կան երկու կարևոր ուրվագիծ-խտացումներ, որոնցից առաջինը կոչվում է «Ուրվագիծ հայ գրականության պատմագրության» (էջ 5–51), երկրորդը՝ «Հայ քննադատության ներածություն» (էջ 52–102): Այս և հետագա իր բոլոր ուսումնասիրություններում Ս. Սարինյանն անվերապահորեն պահպանում է գրականագետի իր դավանանքը. «Եվ հիրավի, իմ ստեղծագործական լաբորատորիայում ես երբեք չեմ անջատել գրականագիտությունը քննադատությունից. չեմ անջատել ոչ թե տարերային ներհայեցողությամբ, այլ որ նրանց նույնականությունն ու մեթոդոլոգիական ընդհանրությունը ինձ համար ըմբռնելի է թե՛ տեսական գրվածքով և թե՛ հոգեբանորեն: Մեթոդոլոգիական այդ ընդհանրության հիմքը գրականությունն է, և երևի հենց այստեղ պետք է որոնել «արժեքների վերագնահատության» այն ձգտումը, որին հետամուտ եղավ 50-ական թվերին ասպարեզ եկած գրականագետ-քննադատների սերունդը» (Հ. I, էջ 3): Գրականագետ-քննադատների այդ սերունդը, որի մասին խոսում է Սերգեյ Սարինյանը, ստեղծել է գրաքննադատական իր դպրոցը և գրա առհավատչյան գրականագետի չորս մեծարժեք հատորներն են: Ամեն անգամ, երբ բացում ես այդ հատորները, հիացմունքի պահեր ես ունենում հեղինակի գրական ու գրականագիտական բազմազանությունից: «Ուրվագիծ հայ գրականության պատմագրության» հետագո-

տությունը նա սկսում է 1829-ին. Վենետիկում իտալերեն լեզվով լույս տեսած Սուքիաս Սոմալի «Quadro» ուսումնասիրության մե և հասցնում է մինչև Մանուկ Աբեղյանի «Հայոց հին գրականության պատմության» երկու հատորները: Այդ երկու դարերի ընթացքում ներկայացվում են մյուս հետազոտողները՝ Ստ. Նազարյան, Հ. Գալթրճյան, Ստ. Պալասյան, Եղիշե Դուրյան, Հ. Մրմրյան, Գ. Զարբհանյան, Ա. Զամինյան, Վ. Փափաղյան, Հր. Աճառյան, Ա. Արփիարյան, Լեո: Հայ դրականության հեղինակներն ապրել են տարբեր վայրերում, եղել են տարբեր գաղափարախոսություն կրողներ, ստացել են այլազան կրթություն՝ հայկական, եվրոպական, ռուսական, եղել են աշխարհականներ կամ հոգևորականներ: Նրանց ստեղծած հայ գրականության պատմագրության դրսևորումները Ս. Սարինյանը բնութագրում է ճշգրիտ ու խորաթափանց:

«Հայոց գրականության երկու դարը» շարքի երկրորդ հատորում (1989) կա «Այսպես խոսեցին դասականները» խորագիրը, որի ներքո գրականագետը քննում է Բաֆֆու, Պ. Պոռչյանի և Պ. Սևակի ստեղծագործությունները: Նույն հատորում ունի նաև «Գրականության գիտությունը» ծավալուն բաժինը: Հետևելով հայ գրական մեծերին՝ Ս. Նալբանդյանին, Հ. Թումանյանին, Վ. Տերյանին, Ս. Սարինյանը շարունակ մտահոգ է հայ գրական ճաշակի բարձրացման խնդրում, ահազանգում է գրականություն ներթափանցող մակերեսային, շինծու սյուսեների վտանգի մասին. «Երբ գիրքային լուսթյան մեջ դրսից կրակոց է լսվում, ապա վիրավոր շան կաղկանձից մեր գրագետները ցնցվում են և բարոյախոսում, թե չի կարելի սպանել թափառող շներին, քանի որ դա դաժանություն է: Իսկ «Գրական

թերթի» սենտիմենտալ հրապարակախոսությունը, խղճի, բարոյության, գթության աղբյուրները, որով նրա հեղինակները թրծում են իրենց շինծու պատմություններն ու մակերեսից գիտված եղելության սյուժեները» (էջ 337):

Այնքան բաղմամբ, ծանրակշիռ ու առաջնահերթ, խորքային ու հանգուցային խնդիրներ է առաջադրում և դրանց էլ պատասխանում անմիջական ու սպառիչ շձ Գ.Ա.Ա. ակադեմիկոս Սերգեյ Սարինյանն իր «Հայոց գրականության երկու դարը» գրքի երրորդ հատորում (2003): Գրքը տրոհված է երեք մասի՝ «Պատմություն և տեսություն», «Անդրադարձ», «Գրական երկխոսություն»: Այս բաժիններում գետնից բերված են անվանի գրականագետի հիմնականում վերջին տարիների հետազոտությունները: Եթե այս գրքին նայենք դրսի աչքերով, այլ քաղաքակրթության կամ գրականագիտական այլ դպրոցների քննական հայացքի տակ, ապա վստահորեն կարող ենք ասել, որ XIX և XX դարերի Հայ գրականությունը նրանում հետազոտված է եվրոպական, նաև մեր ու շատերի կարծիքով ռուսական խիստ առաջավոր գրականագիտական և փիլիսոփայական մտքի չափանիշներով:

«Պատմություն և տեսություն» բաժնում սեղմ և ծանրակշիռ բնութագրականով ներկայացված են Ն. Աբովյանի «Վերք Հայաստանի» վեպի պոետիկան ու կառուցվածքը, Պ. Պոռչյանի վիպասանությունը, Լ. Շանթի ստեղծագործությունը որպես առասպել, Ն. Աղբալյան գրականագետը, Վ. Տերյանի հայտնությունը, Պ. Սևակի բանաստեղծության պատկերի դիալեկտիկան, Հ. Կարապետյանի «Կարթագենի դուստրը» վեպի պատմության և տեսության հարցերը, Հայ նոր գրականության վերագնահատության խնդիրները, քրիստոնեությունը Հայ լուսավորչական մտքի գնահատմամբ և այլն: Գրքի այս մասում գրականագետ Սարինյանը դիտարկում է Հայ գրականության արժեքները և փաստական, իմաստասիրական քննության գնահատում դրանք՝ միշտ չափանիշը պահելով համաշխարհային գրականության դասականների մակարդակը: Հետաքրքիր են նրա մոտեցումները, որոնք մատնանշում են հավերժական այն

թեմաները, Հայ գրականության այդ երկու դարերում ազգային հողի, ազգային քաղաքական, տնտեսական, մշակութային հնարավորությունների սահմաններում լուսաբանված:

Նորովի է մեկնաբանված Ն. Աբովյանի «Վերք Հայաստանի» վեպի պոետիկան: Խոստովանենք «Վերք Հայաստանի» ընտրյալ գրական լսարանի համար է պաշտոնապես հայտնություն, պետք է ունենալ բազմագիտակություն, ազգային առաջադիմության խնդիրներին ծանոթություն, գրականագիտական ընդհանուր պատրաստվածություն, հնության հմայքի ընկալում, որպեսզի հասկանաս, թե ինչ եզակի երևույթ է «Վերք Հայաստանի»: Գրականագետը բացատրում է, որ Աբովյանը ծանոթ էր Լեսինգի, Հեգելի, Շիլլերի և այլոց դեղագիտական, փիլիսոփայական երկերին, ու այս տեսական լուսավոր մտածողությամբ է նա հղացել ազգային վեպի գաղափարը: Բայց նույն Աբովյանը քաջ դիտեր, որ ամեն վեպ պետք է համապատասխանի տվյալ ժողովրդի գաղափարներին ու զգացմունքներին, պահպանի ժողովրդի կենդանի տիպերը: Գրականագետն անդրադառնում է Ս. Ոսկանի և Մ. Նալբանդյանի «Վերքին» տված դնահատականներին, համաձայնելով վերջինիս հետ, հարցի գիտական լուծումը վերադրում է Դ. Դեմիրճյանին, որը 1941 թ. գրել է «Խաչատուր Աբովյանի գրական ժանրերը» հոդվածը: Ս. Սարինյանի կարծիքով, գեղարվեստական ընդհանուր կառուցվածքով «Վերքը» Հայկական ոգու մի յուրօրինակ հանրագիտարան է, Հայ բնաշխարհի իմացության ներքին հոսքերով վեպում երևում է բնության պաշտամունքի կենսափիլիսոփայությունը, տեղայնացված անհատականացված գուտ Հայկական բնույթով: Հետաքրքիր ձևով գրականագետը վեպի կառուցվածքը բաժանում է երեք մասի. «Առաջին մաս՝ դրույթ (թեզիս), երկրորդ մաս՝ հակադրույթ (անտիթեզիս), երրորդ մաս՝ համադրույթ (սինթեզ)», (էջ 134): Այլ կերպ ասած՝ աշխարհ, հակաշխարհ, իդեալ:

Ինչ-որ տեղ ոմանք արխարկ և խիստ հնացած են համարում Պ. Պոռչյանի վեպերը, մինչդեռ գրականագետը մատնացույց է

անում «Սոս և Վարդիթեր» վեպի մեջ եղած համամարդկայինը, որն ամեն մարդու համար նույնն է. «...երազանքը գեպի ազատություն, բուռն ձգտումը թոթափելու ճակատագրի տիեզերական կախվածությունը» (էջ 160): Գրականագիտական սպառնիչ մեկնաբանում է տրված Պ. Պոռոչյանի սոցիալական վեպերին՝ «Հացի խնդիր», «Ցեցեր», «Բղրե», «Հունո»: Հիմնավորվում է, թե ինչու Միկիտան Սաքոն դարձել է տիպական վերժամանակյա կերպար. դա մշտական ճարպիկ ընչաքաղցն է, որի աստվածը մեկն է՝ դրամը, և այն հնարավորին չափ շատ ունենալու ճանապարհը լի է չարություններով և խաբեություններով: Գրականագետը «Հացի խնդիր» վեպը համարում է հլեգիա՝ ծնված Հայ նահապետական գյուղի կործանման ցավից առաջացած տազնապից: Միաժամանակ նա Պ. Պոռոչյանի վեպերը դիտարկում է նորագույն մեթոդների կիրառման շարունակական որոնումների շղթայում:

«Պարոնյանի ձիթաղի փիլիսոփայությունը» հոդվածում Ս. Սարինյանը գիտականորեն համակարգում է մեծ երգիծաբանի գեղարվեստական աշխարհը: Նրա բնութագրումը Պարոնյանի նկարագրած կյանքը՝ իր երգիծական դիտակետից գեղարվեստական մի բարդ համակարգ է, որն անմիջապես կառուցված է այլաբանության օրենքներով:

Գրականագիտական մտքի նվաճում է «Լևոն Շանթի առասպելը» ուսումնասիրությունը: Նկատենք, որ հատկապես գրքի այս հատվածը ճշտորեն ընկալելու համար պետք է ունենալ անհրաժեշտ գիտատեսական դիտելիքներ: Հետազոտության սկզբում բացատրվում է, թե ինչ ազդակների հետևանքով ձևավորվեց Շանթի միստիկական, սիմվոլիստական, գերիրապաշտական մտածելակերպը, որից և ծնվեցին չեքսպիրյան հզոր կրքերով ու հատուկ շնչով ստեղծված ոչ սովորական կերպարներով դրամաները: «Հին աստվածներում» Լ. Շանթը քննում է մարդուն մշտապես հուզող գոյի խնդիրը: Գոյապաշտության խնդրում ընդդիմադիր երկու կրոնների սկզբունքների բախումն է՝ հեթանոսության և քրիստոնեության: Գրականագետը բացատրում է, թե ինչ ձևով հավերժի որոն-

ման գաղափարը Շանթի դրամաներում վերածում է մարդկային հոգու փիլիսոփայական վերլուծումների, որի մեջ կենցաղը, աշխարհի ռեալականությունը, մահից անդին անհայտությունը ծնում են հզոր ողբերգություններ: Այդ ներքին ընդվզումների ոչ սովորական կրողը Օհան Գուրգենն է «Կայսրը» դրամայում, որի կերպարի միջոցով Շանթը ներկայացնում է մեծ գրականության հավերժական խնդիրների հակադրամիասնությունը՝ նյութը և ոգին, Աստված և սատանան, չարը և բարին: Ավարտելով Լ. Շանթի դրամաների վերլուծական խոհերը՝ Ս. Սարինյանը եզրակացնում է. «Շանթը կերտեց մի անզուգական առասպել, ուր գործում են Աստվածներ, Մարդիկ, Պատմություն և Ժամանակ՝ Հայ հոգու ձգտումը տանելով դեպի տիեզերական բարձր արարչություն» (էջ 230):

«Իսահակյանի աշխարհայացքի ակունքներում» հոդվածը ներկայացնում է մեծ բանաստեղծի փիլիսոփայական դիրքորոշումը մարդկության կյանքի իմաստավորման խնդիրներում: Որպես փիլիսոփա գրողի՝ Իսահակյանին տազնապալի ձևով (և այն էլ շատ երիտասարդ Հասակից) հետաքրքրել է, թե արդյոք ամեն ինչ բացատրված է մարդկային կյանքում, թե՞ դեռ կան չբացահայտված կետեր: «Աբու-Լալա Մահարի» հանճարեղ պոեմի սաղմերը գրականագետը տեսնում է դեռ շատ երիտասարդ բանաստեղծի խոհերում: Վերջին հաշվով XIX դարավերջի և XX դարի Հայ նշանավոր գրողների, այդ թվում նաև Ա. Իսահակյանի համար գերխնդիր են մնում մակրոկոսմի և միկրոկոսմի տիեզերքի և մարդու փոխկապերը, որոնք առանցք են կազմում Գրիգոր Նարեկացու «Մատյան ողբերգության» և Շեքսպիրի «Համլետ» ողբերգության: Գրականագետը Ավ. Իսահակյանին բնութագրում է որպես Հայ փիլիսոփայական բանաստեղծության երևելի դրսևորում:

Գրական երկխոսություններից մեկը Հրանտ Մաթևոսյանի հետ է և թվագրված է՝ 1974: Չափազանց ուշագրավ հարցադրումներ տաղանդավոր գրականագետի և արտասովոր տաղանդի տեր արձակագրի միջև, ու նյութը գրականության և կյանքի

փոխհարաբերության մշտական հարցն է, և բանավեճի երկու կողմերն էլ առաջադրում են իրենց դիրքորոշումները՝ ելնելով ստեղծագործական սեփական փորձից: Երկուստեք մտահոգությունը հայ արձակի առաջընթացի խնդիրն է: Ս. Սարինյանի կարծիքով գրողը պետք է տիրապետի կյանքի փրկիսոփայական իմացությունը, մարդու և հասարակության զարգացման գիտական իմացությունը, որը նրա կարծիքով պակասում է ժամանակակից հայ արձակում:

Նույնքան խորքային է երկխոսությունը երկու սերնդի գրականագետների միջև՝ Սերգեյ Սարինյանի և Գրիգոր Հակոբյանի: Մտահոգությունը վերստին ժամանակակից հայ գրականության արժեքներն են, որոնք քննադատական մեկնություններ են ստանում XX դարի երկրորդ կեսի համաշխարհային գրականության մեծերի երկերի համայնապատկերի վրա՝ Ջոյս, Մարկես, Բորխես և ուրիշներ:

Ս. Սարինյանի չորրորդ գիրքը բաղկացած է չորս խոշոր բաժիններից՝ «Գրականության փրկիսոփայություն», «Անդրադարձ», «Լուսանցանշում», «Բանավեճ»: Հոգվածներն ու ուսումնասիրությունները գրվել են ամենատարբեր տարիների և, որ կարևորն է, երկու տարբեր գաղափարախոսությունների ժամանակ՝ խորհրդային և անկախության տարիների: Ընդգրկումը, իրոք, հայոց գրականության երկու դարն է Մ. Նալբանդյանից ու Պ. Պոռյանից մինչև այսօրվա դրականագետները, արձակագիրները, բանաստեղծները:

Ուզում ենք հատուկ շեշտել մի կարևոր իրողություն, որն առկա է գրեթե բոլոր ուսումնասիրություններում: Ս. Սարինյանն իրավացիորեն հիմնավորում է դրականության մարդաբանական էությունը, որից և բխում է նրա կենսական արժեքը մարդու քաղաքակիրթ կյանքի բոլոր ժամանակահատվածների համար: Այս հարցադրումները ոչ միայն չեն անտեսում մարդկության առաջընթացի հետևանքով որոշ առումով ընթերցասիրության պակասը, այլև հոգեբանական, մարդասիրական, հանրային դիտակետից շեշտում են ընթերցանության, գրքի գերակա գերը, որն ապահովողներից է

հենց մշտապես զարգացող, փոփոխվող ու նորացվող գրականագիտությունը:

Ս. Սարինյանը ստեղծել է գրականագիտական իր չափանիշները, իր մտածողական ու հետազոտական համակարգը: Նա ստեղծել է գրականագիտական մի ոճ, որն իրենն է և անհնար է շփոթել ուրիշի հետ: «Լուսանցանշում» բաժնում կա «Մոռացված էջեր» խորագիրը, որի ներքո տպագրված են խորհրդային պետական հրատարակչություններում ընդունված կարգի համաձայն նրա դրած «գաղտնի գրախոսությունները»՝ Հրանտ Մաթևոսյանի, Բաղիշ Հովսեփյանի, Աշոտ Սվրալյանի, Ալեքսանդր Արաքսյանյանի, Ռաֆայել Աթաբեկյանի, Մկրտիչ Ասլանյանի անտիպ ստեղծագործությունների վերաբերյալ: Գրախոսությունների թվականները տարբեր են՝ 1964, 1965, 1966, 1985 և այլն:

Գրախոսելով և երաշխավորելով Հրանտ Մաթևոսյանի «Լեռներս մնացին վերևում» գիրքը՝ հեղինակի պատմվածքների վերաբերյալ գրականագետն ունի հետևյալ ընդհանրացնող նկատումը. «Նա չի տրոհում կյանքն ու մարդկային բնավորությունը: Նա կարծես միտում ունի պահպանելու շեշտական աշխարհի մարդկանց բնածին էպիկականությունն ու բանաստեղծական գեղեցկությունը» (էջ 561): Իսկ Ռ. Աթաբեկյանի «Սերինե» երկի մասին ունի խիստ մերժողական գրախոսություն, որում հիմնավորվում են նրա ժխտական դեհաատականի բոլոր հիմքերը: Գրականագետն առանձին օրինակներ է ընտրել բնագրից և տեսանելի ձևով հիմնավորում է, թե ինչու չի կարելի նման ոճը, գրելու եղանակը ընկալել որպես գեղարվեստական, դրական մտածողություն: Հիմա գրողները, գրականագետները երբեմն զայրացած, երբեմն սովորական դարձած հումորով խոսում են մեծ թվով գրքեր գրող և հրատարակող ու իրենց անվերապահ տաղանդ համարող, գրական աշխարհի մեջ մտնել ցանկացող մի մեծ խմբի մասին, որը հաճախ չի էլ պատկերացնում, թե ինչ է իսկական բանաստեղծությունը, պատմվածքը և վեպը, և, ահա, Ս. Սարինյանի այս գրախոսությունը խիստ տեսանելի, դիդակտիկ-ուսուցողական ձևով հիմնավորում է, թե ինչպես չի կարելի գրել վեպ, վի-

պակ կամ որևէ այլ ժանրի գրական ստեղծագործություն:

Մի առանձին Հայտնություն են սարինյանական այն գնահատականները, որոնք տրված են Հայ դասական դրականության Հայտնի գեմքերին, և որոնք վերաբերյալ կա պատկառելի գրականադիտական Հարստություն: Դրանք են Պ. Պոռոչյանը, Բաֆֆին, Մ. Նալբանդյանը, Գրիգոր Նարեկացին, Ավ. Իսահակյանը, Ն. Զարյանը, Պ. Անկար, Սիամանթոն, Լ. Շանթը: Մ. Նալբանդյանին նվիրված «Ազատության առաջալը» հոդվածում սեղմ ու թարմաշունչ բնութագրականներով նա ներկայացված է որպես բանաստեղծ, արձակագիր, գրական քննադատ, Հրապարակախոս: Մարգու և Հասարակության փոխկապերի շնորհիվ էլ ծնվում են գրական երկի սյուժեները, որոնք Հաճախ ունենում են դարավոր կյանք: Այս բանաձևը փաստացի Հաստատվում է «Սյուժեի մարդկային ձևակերպումը Բաֆֆու վեպերում» Հետազոտության մեջ, որը Բաֆֆիագետ գրականագետի նորացված խոսքն է մեծ վիպասանի մասին:

Հայտնի է Ս. Սարինյանի ծավալուն գիրքը՝ նվիրված Մուրացյանի ստեղծագործությունները, սակայն «Մուրացյանի վիպագրությունը» Հետազոտությունն ամենևին չի կրկնում նախորդին, այլ ունի նոր շեշտվածություն: Արդիական Հարցազրույթներով նա արժեքավորում է «Անգրեաս երեց» վեպը՝ իրավացիորեն Անդրեաս երեցին դիտելով որպես գրողի իդեալը և նրա գոյափոխության սկզբունքների արտահայտությունը: Ս. Սարինյանը դրում է. «Գրականագիտությունը «Անդրեաս երեց» վեպը վերագրել է Մուրացյանի Հետադիմական աշխարհայացքի վրիպանքին և գրեթե անտեսել նրա գրական արժեքը» (էջ 142): Էականն այն է, որ Հայ դասականների գրական նվաճումները, որոնք Հիմա երբեմն անտեսվում են, երբեմն նույնիսկ անհարկի թերահաշատվում Համեմատության մեջ դրվելով Ֆ. Դոստոևսկու և Լև Տոլստոյի գործերի Հետ: Այդ առումով Հատկապես խիստ թերահաշատվում է Պ. Պոռոչյանը: Ս. Սարինյանը 1987-ին գրել է մի ծավալուն հոդված՝ «Ժամանակը Պոռոչյանի ռեալիզմի պոետիկայում», որում կա այսպիսի դիպուկ

նկատում. «Եվ այսպես, կոնկրետ-պատմական բովանդակություն և սոցիալական իմաստ արտահայտելով, անցյալ ժամանակը Պոռոչյանի գեղարվեստական մտածողության մեջ վերացարկվում է այլաբանության, դառնալով բարու, գեղեցկության, կարոտի, մանկության, երազների ու հուշերի մի յուրատեսակ Հոմանիչ» (էջ 157):

«Ընթերցման հաճույքը» հոդվածում քննվում են Ավ. Իսահակյանի «Աֆորիզմները», «Հիշատակարանը», Վիգեն Իսահակյանի «Հայրս» «անհամեմատելի հուշագրությունը», Ավիկ Իսահակյանի «Ավետիք Իսահակյանի գիտական կենսագրություն» առաջին Հատորը, Հանճարեղ բանաստեղծի ակադեմիական բազմահատորյակի առաջին գիրքը, որոնք գնահատվում են որպես «նոր մոլորակներ ազդային Հանճարի հոգևոր տիեզերքում»: Ավ. Իսահակյանի պոետիկ բնութագրելիս Ս. Սարինյանը բացահայտում է այն օրինաչափությունը, որի Հետևանքը եղավ «Աբու-Լայա Մահարի» հզոր պոեմի ծնունդը: 1935-ի ապրիլից 1939-ի օգոստոսը Ավ. Իսահակյանը չի տպագրել ոչ մի բանաստեղծություն: Եվ Հանկարծ «Մեր պատմիչները և մեր գուսանները» պատմափոխության խորախորհուրդ ասքը, ի Հակադրություն «կոմունիստական իմպերիալիզմի գաղափարական փականքներին»:

Գրիգոր Նարեկացու մասին չափազանց շատ է գրվել: Ա. Զոպանյանը նրան Համարում էր Համայն մարդկության ոգու թարգմանը: Ն. Մառը Հավատացած էր, թե Նարեկացու «Մատյան ողբերգության» պոեմն անթարգմանելի է, իսկ Ս. Սարինյանն էլ «Նարեկը» Համարում է անվերժանելի, ասել է թե՛ աստվածային անիմանալիին Հավասար: Առաջարկելով «Մատյան ողբերգության» պոեմի իր ընկալումը՝ Սարինյանը Հեռատեսորեն վերստին թողնում է երկի անվերժանելի լինելու որոշ սահմանադրեր:

Մեղանում Ս. Սարինյանը լավագույն շանթագետն է, նա իր գրքով Հիմնավորում է, թե ինչու: Գրականագետն իր մտածողության ներքին թելերով կապված է Շանթի դրամաների հզոր կրքերի, մեծ խոյացումների տեր Հերոսներին: Նրա դրամատուրգիան ուժեղ ենթաբնագիր ունի, և

գիտնականը գրական աշխարհի Համար վերծանում է այն: 1989-ին է գրված «Լևոն Շանթի ազգային ծրագիրը» ուսումնասիրությունը: Հայոց առաջին Հանրապետության կործանումը, նրա գլխավորների հետ դաժան հաշվեհարդարը իրենց մղձավանջային շրջապատում մեջ են առնում նաև Շանթին, որը բարեբախտություն է ունենում կենդանի մնալ, ազատվել բանտից և հեռանալ արտասահման: Պատմության դառը փորձը, ըստ գրականագետի, ընկած է նրա պատմական դրամաների հիմքում: Ս. Սարինյանը մեծ խորհուրդ է տեսնում Շանթի որդեգրած պատմական ժամանակների ստորաբաժանումների մեջ ասորա-պարսկական հազարամյակ, հունա-հռոմեական հազարամյակ և մահմեդական հազարամյակ: Գրականագետը հիմնավորում է, թե ո՞ր մոտիվներն են մտավորականությանը մղում ազատագրական շարժման:

Գրականագետի այս Հատորում կան մի շարք դիմանկար-բնութագրականներ: Դրանց մեջ ակնառու են Ս. Ազաբաբյանին և Զ. Բալայանին նվիրվածները: Սուրբեն Ազաբաբյանին Հայ գրականագիտական մտքի մեծ երախտավորին, Ս. Սարինյանն անվանում է դասական ոճի գրականագետ. «Գիտական ակադեմիզմը ներհյուսված մտքի բուկոմների փայլուն իմպրովիզացիային», նա այլաբանական գեղեցկություններով բառերին և իր նախադասությունները լիցից բառերին և իր նախադասությունները լիցից «գատողական մետաֆորի» իմաստային թարմությունը» (էջ 457): Զ. Բալայանը հրապարակախոսի մտածումների առանցքն էլ Համարվում է Արցախը. «Դա ճակատագիր է, և դրանով է պատժված Զորի Բալայանը» (էջ 190):

Վարևորում ենք «Նաիրի Զարյանը և գրականության ժամանակը» հոդվածը՝ գրված 2002-ին: Գրականագետն առանձնացնում է Զարյանի ստեղծագործության այն երկերը, որոնք նոր խոսք էին Հայ գրականության մեջ, և այդ իսկ պատճառով էլ ստեղծել են գրողի գրականության ժամանակը. «Հացավանը», «Ձայն Հայրենականը», «Փորձադաշտը», «Աղբյուրի մոտ» մյուսպես մնալու են Հայ գրականության մեջ, իսկ «Արա Գեղեցիկը» «Հայ գրակա-

նության գլուխգործոցներից մեկն է» (էջ 415):

Բոլորովին վերջերս Ս. Սարինյանը «Գրական թերթի» տարբեր Համարներում հանդես եկավ երկու ծավալուն ամփոփիչ հոդվածներով՝ «Արդի գրականագիտության գլխավոր ուղղությունները» ու «Ժամանակը և դրականության ընթացը»: Այդ հոդվածներում իրենց ստեղծագործության գնահատականներն են ստացել շատ գրողներ ու գրականագետներ, մեր ժամանակի գրական աշխարհն է նրանում, իհարկե, հիմնական ուրվագծերով:

Ս. Սարինյանն արդի Հայ գրականության լավագույն գիտականներից է. նա փորձում է շատ կարգալ նաև իր ժամանակակիցներին, ասել իր խոսքը, խրախուսել կամ քննադատել, բայց միշտ էլ մտածելով գրականության վաղվա մասին: Երբեմն հոդվածներում ժամանակակից գրողների հետ կարծես զրուցում է, իր խոսքն է ուղղում, ասենք, բանաստեղծ Հովհաննես Գրիգորյանին, գնահատում, միաժամանակ ուղղորդում է արձակագիրներ Լևոն Խեչոյանին, Գուրգեն Խանջյանին, կանգ է առնում Արմեն Մարտիրոսյանի և Վահրամ Մարտիրոսյանի պատմական վեպերի վրա՝ մատնացույց անելով գրանցում եղած գեղարվեստական արտասովոր ընկալումները: Կիլիկյան Հայկական թագավորության պատմական անդրադարձերը մանրազնին դիտում է Արմեն Մարտիրոսյանի «Մագե կամուրջը» և Վահրամ Մարտիրոսյանի «Հանուն խաչի ծպտվածները» վեպերում:

Ս. Սարինյանը յուրօրինակ հմայք է տեսնում Վարուժան Նալբանդյանի՝ Զեյնա Զոյսին հիշեցնող, ենթագիտակցական ու պարականոն դրականության մեջ: Հաճախ նույն հեղինակը նրա գրչի տակ հանդես է գալիս երկակի ձևով, մերթ հիացմունք, մերթ մերժում: Այս առումով ուշագրավ է Նորայր Աղայանի օրինակը: Սարինյանը խիստ մերժում է «Խաղաղ զորանոցներ» վիպակի հեղինակային մտահղացումը, միաժամանակ նուրբ դիտողականությամբ գնահատում նրա «Կապույտ երգնկա» ժողովածուն և վերջին տարիներին գրած գերիրապաշտական գործերը. «Աղայանը ինքնատիպ ոճի արձակագիր է... «Դավայա-

թաղ»։ «Ապոկալիպսիս», «Թաղման թափոր» գրքերը վերջին տասնամյակի իրադարձությունները պատկերող սյուժեներ են, իրականության մղձավանջի հոգեբանական պոսթկոմը «սեքսուալ ու սեռաբանական աֆեկտի մեջ ներսուզելու այլաբանական լուծումներով» (էջ 259)։ «...Ազալյանի գրիչը ընդհատում է չունի և դեռ ասելիքներ ունի իր գրական տաղանգի թաքույցներում» (էջ 260)։

Ուշագրավ հետազոտություն է նաև «Հայոց ցեղասպանությունը XIX դարի գրականության մեջ» հոդվածը՝ Իրականագետը դնում է ելակետային հետևյալ հարցը. «Հայոց ցեղասպանությունը թուրքիայում ապացույցի ենթակա հարց է։ ...Որպես պատմական եղելություն, դա արժանի է խոր ու համակողմանի ուսումնասիրության, և դրա դիտական իմացությունն ուսանելի է ոչ միայն իրավական ու դիվանագիտական տեսակետից, այլև քաղաքակր-

թության, Արևելքի ու Արևմուտքի բախման, կրոնական մաքառումի, մարդաբանության, ցեղային հատկանիշի, սադիզմի հոգեբանության ճանաչման առումով։ Առավել ևս, որ թուրքի ցեղային այդ ծրագրերը շարունակում է գործել նաև այսօր, ավելի կատարելագործված, ավելի ստոր ու ավելի ոճրագործ եղանակներով» (էջ 330)։ Գրականագետն առանձնացված ներկայացնում է արևելահայ ու արևմտահայ գրականության բազմաթիվ երկեր, որոնք մերկացնում են թուրքերի կազմակերպած հայկական ցեղասպանությունը։

Սերգեյ Սարինյանի «Հայոց գրականության երկու դարը» հոդվածների ժողովածուի չորս հատորները դարակազմիկ նշանակություն ունեն և արդարացիորեն ու ջերմորեն դրանք պետք է ներկայացվեն ՀՀ Նախագահի ամենամյա մրցանակին՝ որպես Հայ գրականագիտական մտքի նվաճում։

ԱՆԼԻՏԱ ԴՈԼՈՒԽԱՆՅԱՆ